Սայաթ Նովա

Շատ մարթ կոսե

Էապես վարսաղ, Արութինի ասած, մե սիրունի վրա:

Շատ մարթ կոսե՝ յիս յարեմեն հասրաթ իմ՝
Լեյլի-Մեջլումն էլ չէ էլի է՛ս հալով.
Մարթ պիտի համաշա բերանըդ տընդղե՝
Խոսկ իս ասում առակավուր-մասալով:

Լիզուդ քաղցըր ունիս՝ շաքար ու շարթին.
Մազիրըդ ռեհան է՝ փաթըթած վարթին.
Քի զարթարած տեսնիմ յիդ ծաղկազարթին՝
Հաքիլ ըլիս զար զարբաբը՝ խաս ալով:

Յա՛ ինձի կորցըրեք, յա՛ մե բան արեք,
Խփեցեք մե տիղըս, մե նշան արեք,
Թեզուզ էստու համա քարասպան արեք՝
Չի՛մ կըշտանում գոզալի հիդ խոսալով:

Աջաբ վո՞ւնց դիմանամ յիս էս չափ դար՞ին,
Աճկեմես արտասունք՛ դուս գու քա արին,
Օրըն իր շաբաթով կարոտ իմ յարին,
Վունց օր ղարիբ բըլբուլ՝ վարթին տիսալով:

Խիլքըս տարավ՝ ջադուքարին չի՛մ տեսի.

Բեմուրվաթին, բեիղրարին, չի՛մ տեսի.
Սայաթ Նովեն ասաց՝ յարին չի՛մ տեսի.
Ման իմ գալի արտատոնքրս հուսալով: